

դրութեամբ՝ (ինչպէս դիւրին է դատել իւր այս ստուար խժշկարանէն), և նաև մեծ հոգածութեամբ կը դասաւորէ Ամիրտուլ-վաթի գործը, մէն մի բառ լաւ կը կշռէ ու այնպէս կը ներկայացնէ, և Ամիրտուլ-վաթի ղեկարարութեամբ վրայ ալ կ'անելցնէ ուրիշ ղեկանուններ, որոնք իւր անձնական փորձառութեամբը բերուած են հոն:

*

Սահակ բժիշկ ինչպէս իւր անունէն կ'իմանանք, ծնած էր Պոնտոս, բայց իր բժշկութիւնը թերեւ ճիշտ ատեն ծննդավայրին մէջ գործադրելէ յետոյ զացած է, ո՞ր գիտէ բախտին ինչ տեսակ հալածանքին պատճառաւ, նախ փաֆա և անտի անցած է Եդոնիա, ուր զրած է նաև ուրիշ բժշկարան մը, որ է մեր այս ուսումնասիրութեան կարգին յիշ. թողը:

ՏՈՒՅ. ՎԱԼԱՐԱՐ Ե. ԹՈՒՐԳՈՍԵԱՆ

ՎԼԿԵՆԻՍԻ — Ս. ՂԱՐԱՐ

6 Յունուար 1923

(Շարունակելի)

ՄՈԱՅԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱԼ ԳԱՆԱՐԸ

(Աշխարհային - Պարսկական աստուածաբանական)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 238)

11. Համիլաուր

Սա նոյնպէս զուտ հայաբնակ է. ընկած է Մամուքայից երկու վերստ հեռու, դէպի արևմուտք, մի հովտում, որի արևմտեան կողմը փուած են արտերը, իսկ հարաւային կողմը, գիւղին կից՝ այգիները, որոնք զարդարած են մտաւորապէս 10, (XX) որթով:

Գիւղը 25 տարւայ պատմութիւն ունի. հիմնուել է 1895 թւին Հաշի-Ալի-Ղուլի խան և Հաշի-Խոսրով խան բախտարացիների ձեռքով. նրանք Մէքքէ ուխտի են գնացել, հաշի դարձել, ապա վերադարձին շինել յիշեալ գիւղը և կոչել Հաշիաբադ, այսինքն հաշի շինութիւն:

Գիւղը բաժանուում է երկու թաղի. առաջինը կոչուում է Բարաֆտար կամ Փէրէցոնց զալէ, որ ընկած է մի բարձրութեան վրայ և ունի 30) տուն, իսկ երկրորդը՝ գիւղ, որ փուած է մի բարձր դաշտի վրայ և բաղկացած է 51 տնից, Տները մեծամասնութեամբ շինած են իրար կողքի, իսկ փոքր մասով կանգնած են միմեանցից հեռու. Հայերն այստեղ հաստատուել են 25 տարի առաջ. նրանցից մեծ մասը եկել են հայաբնակ Ամադաբադ գիւղից, իսկ փոքր մասը՝ Փէրիա գաւառի Բարդաշա, Միլակերտ, Խունկ, Բոյորան և այլ գիւղերից: Այժմ 81 տուն են 39± բնակչով, որի 210ը արական և 187ը իգական. սրանից 27 տունը իռնըլի են:

Գիւղի մէջտեղում կառուցւած է Ս. Սարգիս եկեղեցին. դա փայտաշէն մի շինութիւն է, որ հիմնուել է 1899 թւին, Հաշի Ալի-Ղուլի և Հաշի Խոսրով խաների նիւթական օժանդակութեամբ և ժողովրդի աջակցութեամբ: Եկեղեցին ունի զանգակատան նման մի բան, զարդարած երկու զանգակներով, որ ներքել են յիշեալ խաները:

Եկեղեցում կայ ձեռագիր մի աւետարան «Մ. Մկրտիչ» անունով. դա 500 էջից բաղկացած, կարմիր թաւէ կազմով, թղթայ մի աւետարան է:

Գիւղը դպրոց չունի. գիւղացիների մեծամասնութիւնը տգէտ են. ընդամենը 13 հոգի գրագէտ կայ:

Գիւղում գոյութիւն ունին «Հ. Յ. Դ. Արիւ» և «Աղլուտարիւմ» ընկերութիւնները, Դրանցից առաջինը հիմնուել է 1919 Յունուար 2ին, պ. պ. Մինաս Գեորգեանի, Բարթողիմէոս Տէր-Սիմէօնեանի (ներսէս փնյ.), Մկրտում Ամով-Սիսեանի և Հայրապետ Սարգսեանի նախաձեռնութեամբ, որոնք իրենց նպատակ են դնում:

Ա. Ընկերների մէջ զարթեցնել ընկերասիրութեան և հայրենասիրութեան ոգի:

Բ. Ներթապէս օգնել Հաշիաբադի գիւղի բացառելի հայ դպրոցին:

Սոյն ընկերութիւնը մի հիւղն է կազմում Նոր-Չուրայի Հ. Ե. Դ. Ենթակոմիտէի:

«Աղլուտարիւմ» սկիզբ է առել 1919 փետրուար 1ին: Հիմնադիրներն են. պ. պ. Մատթէոս

1. Բացի յիշեալ աւետարանից տ. Հովփոմէ (Հոսոսիմայ) Ղարաբանի տանը գտնուում է «Ս. Մինաս» անունով մի թղթայ ձեռագիր աւետարան, փայտէ կազմով, բաղկացած է 574 էջից: Յիշեալ կրեւ սրբակնաց կնիք է վարում և զուգակութիւններ առնում:

Տէր-Յուսիկեան, Սուլթան Աբգարեան և Սուլթրաս Նահապետեան: Ընկերութեան ծրագրի էական մասերն են.

Ա. Բարեգործութիւն անել:

Բ. Անդամները մէջ գարթեցնել ընկերասիրութեան, հայրենասիրութեան և մարդասիրութեան զգացում:

Ընկերութիւնն իր ոյժերը ներած չափով օգնում և Հաշիբարդի շքաւոր և կարօտեալ ընտանիքներին, սահմանելով նրանց տարեկան մի որոշ գումար, որ ձեռք է բերում անդամավճարներէր:

Ընկերութեան անդամները թիւն և 27:

Գիւղը պատկանում է Հաշի Ալի-Ղուլի խանի որդիներին՝ Սարգսր Ասադ (Ջաֆար-Ղուլի խան), Ամիրջանգ (Մամթաղի խան) և Սարգար Բահաւտօր (Մամ-Ղուլի խան), որոնց մէջ բաժանւած է գիւղի վեց զօնք հողը: Գիւղացիները հողազուրկ են. նրանք վարում են խաների հողերը և ջրովի հացահատիկների $\frac{1}{10}$ ը, իսկ դէմի հացահատիկների $\frac{1}{10}$ ը տալիս են նրանց: Խաները տարեկան առնում են նաև.

Ուշաբերին	10 շաշի
Կովին	2 դռան
Լիք ձիուն	2 »
Խօշնչից գլին	2 »
Ալգինների հարկ	50 թուման:

Այս տեղի գիւղատէրերը բարեխիղճ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի իրենց հպատակ գիւղացիները, նրանք 1916-19 թնագութեան տարիներին գիւղացիներին տւել են 6-7000 լիտր ցորեն, գարի և կորեկ, այն պայմանով, որ երբ ունենան՝ յետ վճարեն. իսկ 1920-21 թնականին Սարգար-Ասադը ներել է 30 լիտր ցորեն: Բայց չնայած դրան՝ գիւղացիների տնտեսական դրութիւնը անմիթիվար մի պատեկը է ներկայացը: Նուա՛ն Դրա գլխաւոր պատճառը հետեանալն է. գիւղատէրերն իրենց գիւղի գործերը ղեկավարելու գործը յանձնել են Աբտօլա Խան-Բահատօրին. սա էլ իր կողմից գործակալ է նշանակել Ա. Քէրիմին, որ անբարեխիղճ կերպով շահագործում է գիւղացիներին, առնելով մի շարք անհուն հարկեր, ինչպէս օր. 1000 լիտր դարման, 100 բեռ թաց շաւղառ, 300 ձու, 60 հաւ, հրեքն էլ 4-6 ձի է ուղարկում գիւղը, որպէս զի գիւղացիներն իրենց հաշով պահեն:

Հողը մասամբ ջրովի է և մասամբ էլ դէմի. ցանում են ցորեն, գարի, հաճար, ոսպ, սիսեռ,

հողաւոր, կտաւահատ, կորեկ, հօնջա, շաւղառ և այլն: Օգտւում են գիւղի արևելեան կողմը գտնուող ջրմուկներից, որոնք են. 1) Վերին-Բիդաբատում. սա իր անունն ստացել է տարիներ առաջ ջրմուկի մօտ գտնուող բաղան (նիշ) ծառից. 2) Ղարաբուլաղ, իր մէջ գտնուող սև քարերի ու ավազների պատճառով կոչւում է սև ավազի. 3) Նազար-Բահրամ, Նազար անունով անւանի մի պարսիկ կոչել է իր և Բահրամ հօր անունով և 4) Քաշի - Բիդբատում: Գիւղալ ջրմուկները գիւղի արևելեան կողմից օժապտոյտ հոսելով՝ ոռոգում են արևմտեան կողմի արտերը, իսկ հիւսիսային կողմը գտնւում է գիւղի քահանգը: Բացի դրանցից՝ գիւղացիներն օգտւում են նաև մի աղբի ջրից. դա սկիզբ է առնում Զիրիգանու ձորամիջից, ապա հանդարտ հոսելով՝ բաժանւում է երեք ճիւղի, որոնցից երկուսը ձորամիջի ջրով արագընթաց հոսելով դէպի պարսկաբնակ Գեհարի գիւղը, ոռոգում են նրա արտերը, իսկ երրորդը Դարգիրան սարի լանջից օժապտոյտ բարձրանալով՝ հոսում է դէպի արևելք և Հաշիբարդի շրաղացին ջուր մատակարարելուց յետոյ՝ թեքւում է դէպի արևելք և ոռոգում գիւղի արևելեան կողմի արտերը:

Գիւղն ունի մի բաղնիս, երկու կրպակ և մի ջրաղաց. վերջինս գտնւում է գիւղի հարաւային կողմը, 1400 քայլ հեռաւորութեան վրայ, իսկ գիւղից 300 քայլ հեռու, դէպի արևմուտք, մի բլրի լանջին փռւած է գերեզմանատունը:

Գիւղում կայ մի աշուղ Թարթուն Բիւրաւու միտն անունով, որ նագում է չոնգուրի վրայ և երգում պարսկահայ աշուղներից Գարթուն օղու, Ամիր օղու և Տէր-Կարապետի երգերը: Գիւղի քահանաւորն է պ. Սուլթան Ա. Կալապետեան, որ անբարեխիղճ և շահամոլ մի տանուտէր է:

12. Բալլիսլու

Այս կանանչազարդ պարսկա-հայաբնակ փոքրիկ գիւղն ընկած է Հաշիբարդից դէպի արևմուտք, երեք ֆարսախ հեռու, մի բլրի կողքին. շրջապատւած է հողէ պարսպով և ունի մի դարբաս. տները երկարականի են և շինւած են կողք կողքի:

Բալլիսլու թրքերէն նշանակում է ձկնաշատ: Խմելու ջուրն աղբիւրի է, ընկածները երկու աղբիւր կայ. դրանցից մէկը բլրում է գիւղի հիւսիսային կողմը գտնուող բլրի փէշից և թափւում իր առաջ գտնուող ձկնառատ մեծ գետում (աւա-

զանուո՞մ), ապա այդտեղից հոսելով դէպի արև-
մուտք, ոռոգում է գիւղի արտերը, իսկ միւս
աղբերը, որ կոչւում է Եւլանշի-սողիկ, խա-
ռոզ, գտնուում է գիւղի արևելեան կողմէն և գա-
նան, ուղիղ երեք ամիս, երեք շրադապի շուր
է արտադրում:

Հայերը բնակւում են գիւղի արևմտեան կող-
մը. նրանք հաստատւել են այստեղ 1916 թւին.
աղբիւն են Մամուքայից և Սիրաքից: Այժմ
չորս տուն են, 12 շնչով, որի 5ը իգական է և
7ը արական:

Գիւղը վեց զօնք է, որի կէսը, այսինքն 37
հարբան վարում են Հայերը և շրովի հացահա-
տիկների¹, մասը և դէմի հացաբոյսերի¹, ը
խաներին են տալիս: Արիշ հարկ չեն վճարում,
բայց շնայած գրան, գիւղացիներն այստեղ էլ
տնտեսապէս շատ անխիթար դրութեան են
գտնուում, որ հետեանք է կատարող հարստա-
հարութիւններին:

Հայերը ոչ եկեղեցի ունեն, ոչ էլ զպրոց. ընդ
ամենը մի հատ գրագէտ կայ:

Գերեզմանատունը փուած է գիւղի արևելեան
կողմը, 15 քայլ հեռու, մի բլրի վրայ:

13. Սիրաք

Հաջիաբաղից դէպի արևմուտք, հինգ ֆար-
սախ հեռու, մի ընդարձակ դաշտի վրայ փուած է
Հայաբնակ Սիրաք գիւղը, որ սահմանակից է
մի շարք պարսկաբնակ գիւղերի, այսպէ՛ս՝ Արե-
ւելից՝ Եամսաբաք, Արևմուտքից՝ Հովչիգան,
Հիւսիսից՝ Թաղանաք և Հարաւից՝ Կովաբադ:

Սիրաք պարսկերէն բառ է, բաղկացած է սիր-
կուշ և աքցանել բառերից, ուրեմն Սիրաք նը-
շանակում է առատ ցանքսի վայր:

Գիւղը չորս կողմից պնսպարդւած է ստուռ-
րախիտ ծառատաններով, որոնք գարնան կա-
նաչելով՝ գիւղին առանձին գեղեցկութիւն են
տալիս, իսկ հիւսիսային կողմը փուած է գիւղի
պոստանը, ուր մշակում են քալ, վարունգ,
ձմերուկ, սեխ և այլն:

Գիւղը չբնակաւորւած է ցեխաչէն պատով և
ունի երեք դարբաս. բաղկացած է երեք դալայից.
1) 8ածի-Ղալէ, որի տների թիւն է 25, 2) Մի-
շի-Ղալէ, որ ունի 25 տուն և 3) Կոր-Ղալէ, որ
բաղկացած է 27 տների: Տները երկյարկանի են
և շինուած կողք-կողքի, իսկ փողոցները նեղ են
և ծուռ ու մուռ: Այժմ տների թիւն է 77, 389
շնչով, որի 183ը իգական է և 206ը արական:
Մրանից 33 տունը խօշնդին են: Գիւղացիներին

այստեղ հաստատւելը 240 տարւայ պատմութիւն
է. եկել են պարսկաբնակ խորմընուն գիւղից:

Հողատիրութեան տեսակը խանական է. պատ-
կանում է Բախտիարցի Եուսուֆ խանին (Էմիր
Մօշահիդին), Հայերից երկու հարբա հող ունի
պ. Եաժար (Մէհրաբ) Ղարախանեանը (այժմ
բնակւում է Կոր-Ջուղայում), իսկ ծնացեալները
հողազուրկ են. նրանք մշակում են խանի հինգ
զօնք հողը և դէմի հացահատիկների¹, և շրովի
բերքի¹, մասը տալիս են նրան: Այլ և տա-
րեկան վճարում.

Ուխտարին	10	շայի
Էգ ձիուն	2 ¹ / ₂	զոան
Ջորուն	2	»
Կովին	2	»
Խօշնդնի գլխ.	2	»

Բացի յիշեալ հարկերից՝ խանն առնում է նաև
6000 լիտր դարման, 1350 բեռ կանաչ շաւղառ,
200 լիտր չոր շաւղառ (զուռա), 450 ձու, 360
լիտր գազ (վառելիք). նաև գիւղացիները խանի
համար ցանում և մշակում են վեց արտ շաւղառ,
իսկ այս տարի խանը 15 ձի է ուղարկել գիւղ,
որպէս զի գիւղացիները իրենց հաշւով վեց ամիս
պահեն:

Հողը հերկւում են վեցելիով և ցանում ցորեն,
գարի, հաճար, կտաւահատ, ոսպ, քիսին, շաւ-
ղառ, նուշի, կորեկ և այլն: Գիւղը շրի կողմից
բաւական հարուստ է. արևմտեան կողմում, 5½
քայլ հեռաւորութեան վրայ, բլրիւմ է Ենգի-
բարի աղբերը՝ Դա սկիզբ է առնում Եօղլուստի
դաշտից և հանդարտ հոսելով՝ գրկախառնում
է իր առաջ գտնող գետակի հետ: Իսկ Ջհանբի
սարի լանջից բլրիւմ է Ջէշմազանի աղբիւրը,
որ մի փոքրիկ առու կազմելով՝ գնում միանում
է Ղարաշէմէ շրմուխին, ապա օձապտոյտ դէպի
արևմուտք հոսելով՝ ոռոգում է Սիրաքի արտերը,
յետոյ իր ընթացքը դէպի արևելք, ապա դէպի
հարաւ ուղղելով՝ գնում թափւում է Գառուն
գետը: Բացի այս աղբերներից՝ գիւղի հարաւ-
ային կողմը գտնուող Ջհանբին (աշխարհատես)
սարի փէշերից բլրիւմ են բազմաթիւ աղբիւր-
ներ, ինչպէս Լօռի, Քաշալ, Եւլանշի, Եղիկի
և ուրիշներ, որոնք օձապտոյտ հոսելով՝ ոռոգում
են գիւղի հարաւային կողմը գտնող մի քոնի
մասնաւոր արտերը:

Գիւղի գրեթէ մէջտեղում կանգնած է Ս. Գէորգ
եկեղեցին. դա Չահարմահալի ամենագեղեցիկ
եկեղեցին է. ունի ութը միծ և փոքր գմբէթներ:
Կերսից ձիւնանման կիրով սպիտակացրած է

և զարգարած չորս քարէ սիւներով. դրանցից
աշակողմեան սիւնի հարաւային երեսի վրայ
փորագրած է հետեւեալ արձանագրութիւնը.

1866, 28 Յոկտ.
Պատմաւո
Շիմութեան
Սուրբ եկեղեցոյ
Պրմ. Սիմէոն
Պրմ. Խորապետ
Որ եւ Տէր
Փոխարինեացէ
Զվաստակա զորա,
Որ արդար մա բազում
Համացողութիւն
Յիշատակի իւրմ
Եւ իւրայմոցն եղիցի:

Նոյն սիւնի արեւելեան երեսին փորագրած է.

Որ հանդիպեացէ
Յիշեացէ զպատմաւո
Բարեաց:

Իսկ ձախակողմեան սիւնի վրայ գրւած է.

Սոյն երկու
Ամդիմամ սիւնքս
Արդեամց պրմ. Մկրտիչ
Խորապետի,
Որ եղևալ յիշատակ
Եկեղեցոյս վասմ իւր
Եւ իւրայմոցն
1866 Յոկտ. 28.

Եկեղեցու տաճարի առջևի մասը ծածկւած է
մի կտոր երկար քարով, որի վրայ փորագրւած է.

Ի 1865, ի 20 Մայիս
Սոյն արդեամց և ծախուց,
Մեսրոպ քահանայ, ի
Որ ետ եկեղեցու Սիրաքա
Յիշատակ իւրմ, ծնողացմ Տէր-Մարտիրոսին,
Եւ զաւակացմ Տէր-Մարտիրոսին,
Միմասին, Յովսէփին, Ալվազին:

Իսկ աւագ դասի պատին կայքած է քառա-
կուսի մի քար, որի վերևի մասում փորագրւած
է Յիսուսի խաչելութիւնը, իսկ ցածում գրւած է.

Արծանս ի յիշատակի
Հանգուցեալ Տէր-Մարտիրոսի,
Տէր - Մեսրոպեան
Եւ տիրուհի տիկնոջմ ի Քս
Իրիսիմու 66 և 57 ամաց
Համզեալ 'ի Տէր:
1892 Նոյեմբեր 5

Եկեղեցու դրան վրայ, պատին կայքած է մի
մարմար քարէ խաչ, հետեւեալ արձանագրու-
թեամբ.

Սուրբ խաչս յիշատակ է
Փրմումին և կողակցին,
Խաթու Համին
Թվին Ռ. Զ. Թ.

Եկեղեցում կայ ձեռագիր մի աւետարան Ո.
Գեորգ անունով. դա կաշեկազմ, հաստափոր
աւետարան է, որի մի երեսը զարգարած է ար-
ծաթեայ խաչերով, իսկ միւս երեսի վրայ քան-
դակած է մի այլ արծաթեայ խաչ: Աւետարանը
գրւած է հայոց Ջ Ը. Թաւադիւն:

Գիւղի հարաւային կողմը կանգնած է «Հայ-
րիկիւն Դպրոցը», որ կառուցւել է 1908 թ.ին
Նոր - Զուլայի եկեղեցիների յիւթական օժան-
դակութեամբ և Բագրատ Վրդ. (այժմ եպիս-
կոպոս) վարդապարեանի նախաձեռնութեամբ:
Դպրոցը շրջապատւած է ցեխաշէն պատով.
Հէնքը բաղկացած է երեք մծն և օդատուն սե-
նակներից. Հէնքի առջևում փուած է մի փո-
քրիկ պարտէզ, զարգարած ուռենու ծառերով:
Այս տարի դաս աւանդում էր մի ուսուցիչ -
քահանայ՝ Տէր-Յովսէփ Աբրահամեան, որ նշա-
նակւած է Նոր-Զուլայի Գիւղական Յանձնա-
խմբի վարչութիւնից: Դպրոցում կայ մօտ 36
աշակերտ-ուհի, որոնց թիւը երկրագործական
զբաղմունքների պատճառով գարունից սկսում
է նւազել:

Դպրոցը պահուում է Նոր-Զուլայի եկեղեցիների
նպաստներով: Ընդհանրապէս Արարցեցիք ան-
տարբերութեամբ են վերաբերւում դէպի իրենց
կրթական գործը և ոչ մի դրամական օժանդա-
կութիւն ցոյց չեն տալիս, որով տուժում է դը-
պրոցի կրթական վիճակը:

Գիւղում գոյութիւն ունի «Հ. Բ. Արթուր»
Բարեգործական խումբը, որ հիմնւել է 1919
Յունւար 1ին պ. պ. Մարտիրոս Տէր-Մարտի-
րոսեանի և Թադէոս Ս. Ղարախանեանի նախա-
ձեռնութեամբ: Ընկերութեան ծրագրի էական
մասերն են.

Ա. Օգնել աղքատներին, բժշկել չթաւոր հիւանդներին, ուսման տալ երեխաներին և դպրոց բանալ նոյն գիւղում ուսում տարածելու համար:

Բ. Ընկերութեան դրամազէլի տոկոսն կ'իրաւործի բարեգործական նպատակով:

Գ. Ընկերութիւնն խոստանում է բերել գիւղում կրթւած ուսուցիչներ և ձրի գրքեր բաշխել աղքատ երեխաներին:

Դ. Նոյնպէս օգնել դպրոցական որբ աշակերտներին հազուստով և կօշկոյով:

Ե. Ընկերութիւնն խոստանում է աղքատներին համար բանալ հացագործի մի խանութ և հաց բաշխել աղքատ-սովաւաններին:

Ընկերութեան նիւթական միջոցները կազմում են անդամավարները: Անդամների թիւն է 18:

Գիւղի արեւելեան կողմը, 50 քայլ հեռաւորութեան վրայ, ծառատանի մէջ, փուած է շրաղացը, իսկ գերեզմանատունը գտնուում է գիւղից 70 քայլ հեռու, դէպի հիւսիս, մի բլրի վրայ, ուր 240 տարւայ տապանաքար կայ:

Գիւղն ունի երկու կրպակ:

14. Անուադարաւ.

Հայաբնակ այս գիւղն ընկած է Սիրաքից մի ֆարսախ հեռու, դէպի հիւսիս, մի ընդարձակ դաշտի վրայ, որի չորս կողմը զարդարւած է ուռենու և բարդենու ծառատնիկաբաններով:

Անադարաւը պարսկերէն բառ է և նշանակում է Անամղի շինութիւն, որ մօտ 250 տարւայ հիմնարկութիւն է. բաղկացած է երեք զալէնէ. բից. 1) Աղամի զալէ, որ միայն 6 տուն ունի, 2) Ժամի զալէ, որի տների թիւն է 18 և 3) Գաշի զալէ, որ բաղկացած է 16 տնից, ընդամենը 40 տուն է, 180 շնոյով, որի 82ը իգական է և 98ը արական. սրանից 20 տունը խօշնընին են. պանդխտութեան մէջ են 20 հօգի, որոնք գտնուում են Բասրա, Նասէրի, Նոր-Ջուզա և այլ քաղաքներում:

Գիւղը չըշապատւած է ցեխաշէն պատով և ունի չորս դարբաս: Տները երկյարկանի են և շինուած կողք-կողքի: Տարիներ առաջ գիւղը եղել է չէն և բազմամարդ, բայց այժմ մեծամասնութեամբ կիսաքանդ է ու աւերակ. իր տեսքով խիստ տխուր տպաւորութիւն է գործում իւրաքանչիւր այցելուի վրայ:

Գիւղի համարեա կենդրոնում կանգնած է Ս. Մինաս եկեղեցին, որ կառուցւել է Մ. Ե. Զ.

(հայոց 1226 թիւն). դա ցեխաշէն և անպաւնդ մի եկեղեցի է. զարդարւած է երեք փոքրիկ գմբէթներով և քարէ չորս սիւներով. վերջիններս վրայ կան արձանազրութիւններ, որոնք սակայն մաշւած լինելով՝ չկարողացանք կարգաւ: Եկեղեցին ունի մի հաստափոր ձեռագիր, թղթեայ աւետարան, որի առջևի երեք թղթերը զարդարւած են ոսկեգօծ նկարներով. գրւած է Ռ. Ճ. Զ. (1106) թիւն: Եկեղեցին ունի նաև երկու փոքրիկ զանգակ:

Գիւղը գուրկ է դպրոցից, ընդամենը վեց հօգի գրագէտ կայ:

Գիւղում գոյութիւն ունի «Հ. Բ. Դ. Ազգային և զօրաւոր խումբ», որ հիմնւել է 1919 թ. Յուլիսի 23ին: Հիմնադիրներն են պ. պ. Յովսէփ Մարթնոսեան, Կարապետ Յովսէփեան և Մարտիրոս Գրիգորեան:

Ընկերութեան նպատակն է.

Ա. Նիւթապէս օգնել գիւղի եկեղեցուն և դպրոցին:

Բ. Օգնել չթաւոր դասակարգին:

Ընկերութեան անդամների թիւն է 21:

Գիւղը կալւածատիրական է. հողատէրերն են Հադի խան, Գարաբ խան և Ջօհրաբ խան եղբայրները, որոնց մէջ բաժանւած է գիւղի ինը դօնգ հողը: Գիւղացիներից վեց տուն Ֆաթաբաղում 18 հաբբա հող ունեն. մնացեալները հողազուրկ են. նրանք վարում են խաների 108 հաբբա հողը և ջրովի հացահատիկների $\frac{1}{3}$ և դէմի բեգթի $\frac{1}{4}$ մասը տալիս են նրանց: Բացի այդ՝ խաներն առնում են.

Ուխարին 10 չափ

Էգ ձիուն 2 զոան

Կովին 2 »

Մեղրի փեթակին . 10 չափ

Խօշնընից զլիւ. հարկ. 2 զոան

Այս տարի խաներն առել են նաև 2700 լիտր գարման (54 հաբբայից), 54 բեռ վառելիք և 20 մշակ, որոնք 20 օր աշխատել նրանց գործերի վրայ:

Հողը մեծամասնութեամբ ջրովի է, իսկ փոքր մասը՝ դէմի: Վարում են վէցկիով և ցանում նոյն հացահատիկները. օգտուում են գիւղի առեւելեան կողմը, 100 քայլ հեռաւորութեան վրայ գտնուող երկու ջրմուղներից, որոնք սկիզբ են առնում Դահարման դաշտից. Գրանցից մէկը գիւղի արեւմտեան, իսկ միւսը արեւելեան ուղղու-

թնամբ հոսելով՝ ոռոգում են արևմտեան և հաւաքային կողմի արտերը:

Գիւղն ունի երկու գերեզմանատուն. դրանցից մէկը փռած է գիւղի հարաւային կողմը, 800 քայլ հեռաւորութեան վրայ, ուր 20(0) տարւայ տապանաքար կայ, իսկ միւսն ընկած է գիւղից 900 քայլ հեռու, դէպի արևմուտք:

* *

Քացի յիշեալ գիւղերից՝ կան նաև մի շարք հայաբնակ գիւղեր, ուր այժմ պարսիկներն են բնակուում. հայերը հարստահարութիւնների հետևանքով, ժամանակի ընթացքում, թողել են և հեռացել: Դրանք են. — Խարաշի, Դիշնիս, Շալամայ, Զիւրիգան, Դասկերտ, Բօլղաշի, Քէնդուան, Խանը-Միլզա, Դէյիէլիֆա, Սինի, Դաղնա, Ֆանդիգան, Գիշնիգան, Ասաղաբաղ, Քեարասկան, Քաթակ, Մահամայ:

Աւերակ գիւղերից յիշատակենք Զանգեան, Սուլուզան և Վաստիգան: Վերջինս մի դար առաջ եղել է արգասանդ ու չէն մի գիւղ, ուր բնակելիս են եղել քաղաքի հայ գիւղացիներ: Գիւղի նախկին հայ բնակիչների և նրանց աշխատասիրութեան պերճախօս վկաներ մնացել են ջրաղացներից, ձիթի գործարանների մեծ և կլոր քարերը, կիտակործան եկեղեցին և գերեզմանատունը:

Գիւղի հարաւային կողմը, Սօվզու սարի լանջին փռած է գերեզմանատունը, ուր կան մօտ 220-231 տարւայ տապանաքարեր. դրանցից աւանանշանուրը Տէր-Սուփրասի տապանաքարն է, որի երկարութիւնն է 15 թաւափ, լայնութիւնը՝ 4, իսկ բարձրութիւնը՝ 5: Քարը 231 տարւայ պատմութիւն ունի:

Եւրոնիների ասելով՝ այս գիւղն ունեցել է եօթը դարբաս, եօթը ջրաղաց և եօթը ձիթաահանը:

Վիճակագիր Չահարմահայ զաստի հայ գիւղացիութեան 1856-1920

N°	ԳԻՒԳՆԵՐԸ	1856 թ.	1880 թ.	1888 թ.	1901 թ.	1903 թ.	1917-1918 թ.	1920 թ.
		Տղեր Շուրհ. Սուրհ. Երեւ. Սուրհ. Շուրհ.	Տղեր Շուրհ. Սուրհ. Երեւ. Սուրհ. Շուրհ.	Տղեր Շուրհ. Սուրհ. Երեւ. Սուրհ. Շուրհ.	Տղեր Շուրհ. Սուրհ. Երեւ. Սուրհ. Շուրհ.	Տղեր Շուրհ. Սուրհ. Երեւ. Սուրհ. Շուրհ.	Տղեր Շուրհ. Սուրհ. Երեւ. Սուրհ. Շուրհ.	Տղեր Շուրհ. Սուրհ. Երեւ. Սուրհ. Շուրհ.
1.	Դիշնիս	—	—	—	—	—	22 45 51 96	16 26 39 65
2.	Մամուռան	24 145	66 981	80 524	70 206	174	67 186 156 342	45 113 97 212
3.	Լիվանան	83 561	139 779	97 747	145 408	335	150 765	90 260 227 487
4.	Ներքին-Քոնարք	—	—	—	43 105	100	43 225	65 171 145 316
5.	Վերին-Քոնարք	—	—	50 320	107 277	265	107 540	132 378 358 736
6.	Մաշիկան	—	—	—	—	—	—	—
7.	Շահբուլաղ	—	—	—	—	—	12 42 37 79	14 28 22 50
8.	Սինապան	—	—	12 72	24 62 59	25 135	50 100 100 200	39 74 88 162
9.	Աղբուլաղ	—	—	—	—	—	45 220	56 146 130 276
10.	Մամուռ	—	79 465	75 585	142 412 378	140 795	140 373 341 714	126 282 277 559
11.	Հաւրբուլաղ	—	—	—	68 195 146	65 325	86 248 185 433	77 189 170 353
12.	Բաւրբուլ	—	—	—	—	—	—	—
13.	Սիւրաք	64 522	77 465	72 391	90 240 269	90 510	93 202 204 406	74 174 200 374
14.	Ահմադաբաղ	92 597	88 408	72 318	—	70 345	42 106 87 193	43 92 84 176
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՅՈՒՆԻ ԳԻՒԳՆԵՐԸ								
1.	Գիշնիգան	43 239	98 173	15 97	—	—	—	—
2.	Բօլղաշի	—	37 181	24 110	44 112 112	—	—	—
3.	Քեարասկան	—	9 48	—	—	—	—	—
4.	Քաթակ	—	—	13 66	—	—	—	—
5.	Մահամայ	24 145	—	—	—	—	—	—

Վիճակ

(Շարունակելի)

ԱՐԱՐ ԵՐԵՎԱՆ